ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«ՇՊՀ» հիմնադրամ

Ավարտական հետազոտական աշխատանք

Առարկա ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թեմա ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ղեկավար՝ Ա. Գասպարյան

Կատարող՝ Մ.Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդների ծագումնաբանության հարցը միշտ էլ արդիական և հետաքրքրաշարժ հիմնախնդիր է հանդիսանում շատ ուսումնասիրողների համար։ Մարդկության պատմության կարևորագույն հիմնահարցեր է ուսումնասիրում էթնոգենեզը կամ ազգածագումը, որն երկարատև և բարդ պատմական երևույթ է, ինչն արտացոլում է մարդկային առանձին խմբերի ծագման, լեզվական, ազգագրական, մարդաբանական, մշակութային առանձնահատկությունները, նրանց տեղաշարժերը, փոխազդեցությունները, միախառնումը, դրանց պատմությունը։ Էթնոգենեզի լուսաբանման համար օգտագործվում են գիտությունների տվյալները վերոհիշյալ բնագավառների վերաբերյալ։

Մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հայ ժողովրդի էթնոգենեզի մասին առկա տեսությունները, համեմատել, վերլուծել դրանք՝ հստակեցնելով վերջիններիս հավաստիությունը և հայ ժողովրդի՝ որպես Հայկական լեռնաշխարհի բնիկներ լինելու իրականությունը։

Հայերի ծագման վերաբերյալ հին ու միջին դարերում գրի են առնվել մի շարք ավանդություններ, որոնցից հայագիտության տեսանկյունից (որպես սկզբնաղբյուրային արժեք ունեցողներ) առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայկականը, հունականը, հին եբրայականը, վրացականը և արաբականը։

Բանալի բառեր- էթնոգենեզ / ազգածագում/, հայկական, հունական, վրացական, եբրայական, արաբական տեսություններ, հնդեվրոպական լեզվաընտանիք, Հայկական լեռնաշխարհ, բնիկ ժողովուրդներ, Հայասա ցեղային միություն, Գրիգոր Ղափանցյան։

Հայկական ավանդությունը ստեղծվել է դեռեւս վաղնջական ժամանակներում եւ առավել համապարփակ մեզ հասել Մովսես Խորենացու գրառմամբ: Ավանդության առանձին դրվագներ հիշատակվում են միջնադարի հայ մատենագիրների երկերում, որոնք 18-րդ դարում ի մի բերվեցին հայ նոր պատմագրության հայր Միքայել Չամչյանցի «Հայոց պատմության» էջերում:

Ավանդության մեջ որոշակիորեն կարելի է առանձնացնել երկու շերտ: Առաջին՝ հնագույն շերտը, ստեղծվել եւ գոյություն է ունեցել նախաքրիստոնեական ժամանակներում: Հնավանդ զրույցի համաձայն, հայերը սերվել են աստվածազուն Հայկ նահապետից, որն առաջին եւ արարչագործ Աստվածների հսկա որդիներից էր: Ահա թե ինչպես է ներկայացվում հայոց նախնու ծագումը Մովսես Խորենացու գլխավոր սկզբնաղբյուրներից մեկի՝ Մար Աբաս Կատինայի մատյանի սկզբում. «Աստվածներից առաջիններն ահեղ էին եւ երեւելի, եւ աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը… Սրանցից մեկն էր եւ Հապետոսության Հայկը»…[1]

Քրիստոնեական ժամանակաշրջանում հայկական ավանդույթը ենթարկվում է ձեւափոխության՝ հարմարեցվելով Բիբլիա-Աստվածաշնչի պատկերացումներին, որոնց համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղից հետո ամբողջ մարդկությունը սկզբնավորվեց Նոյի երեք որդիներից (Հաբեթից, Քամից եւ Սեմից): Ավանդության նորացված, քրիստոնեացված տարբերակի համաձայն՝ Հայկ նահապետը համարվում է Հաբեթի ժառանգներից Թորգոմ նահապետի որդին. այդտեղից էլ՝ միջնադարյան գրավոր աղբյուրներում Հայաստանին տրված «Թորգոմա տուն» եւ հայերին տրված «թորգոմյան ազգ» անվանումները (Աստվածաշնչի Թորգոմ նահապետը համարվում է Հայաստանի հնագույն պետական կազմավորումներից մեկի՝ Եփրատի ավազանում գտնված Թեգարամա-Թոգարմայի անվանադիր նախնին. այդ պետական

[1] Սամուէլեան Թ., Հայոց ծագումը. հին ու նոր աղբյուրների և տեսությունների ակնարկ, Ե., 2000, էջ 2

կազմավորման մասին վաղագույն տեղեկությունները վերաբերում են Ք.ա. 20-18-րդ դարերին):[2]

Ավանդությունը պատմում է, որ Հայկն իր տոհմով պատերազմել է միջագետքյան բռնակալ Բելի դեմ, հաղթել նրան, ի նշանավորումն որի այդ օրվանից հայերը սկսել են հաշվել Բուն Հայոց թվականը (ըստ ականավոր հայագետ Ղեւոնդ Ալիշանի 19-րդ դարում կատարած հաշվարկի՝ Բուն Հայոց թվականի սկզբնավորումը տեղի է ունեցել Ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ին):

Հայկական ավանդության համաձայն, Հայկ նահապետի անունով մեր ազգը կոչվեց «Հայ» եւ երկիրը՝ «Հայաստան», իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից առաջացան Հայաստանի «Արմենիա» եւ Հայերի «Արմեն» անվանումները: Ըստ նույն ավանդության՝ Հայկի ու հայկազուն նահապետների անուններով կոչվեցին մեր լեռնաշխարհի բազմաթիվ տեղանուններ (Հայկից՝ Հայկաշեն, Արամանյակից՝ Արագած լեռ եւ Արագածոտն գավառ, Արամայիսից՝ Արմավիր, Երաստից՝ Երասխ (Արաքս), Շարայից՝ Շիրակ, Ամասիայից՝ Մասիս, Գեղամից՝ Գեղարքունիք եւ Գեղարքունյաց ծով, Սիսակից՝ Սիսական (Սյունիք), Արա Գեղեցիկից՝ Այրարատ եւ այլն):[3]

Հունական ավանդությունը հայերի ծագման հունական զրույցը կապվում է Հին Հունաստանում սիրված ու տարածված մի վիպաշարի՝ արգոնավորդների մասին ավանդության հետ: Վերջինիս համաձայն, հայերի նախահայրը եւ Հայաստանի անվանադիրը Արմենոս Թեսալացին էր, որը Յասոնի եւ մյուս արգոնավորդների հետ մասնակցել է Ոսկե Գեղմի համար կատարված նավարկությանը, հաստատվել Հայաստանում, որն էլ իր անվամբ կոչվել է «Արմենիա»: Ավանդությունը հաղորդում է, որ նրա նախնական բնակավայրը եղել է Թեսալիայի (մարզ Հունաստանում) Արմենիոն քաղաքը: Ավանդությունն առավել հանգամանորեն պատմվում է Ք.ա. 1-ին դարի հույն մատենագիր Ստրաբոնի կողմից, որը նաեւ հաղորդում է, թե իր տեղեկությունների սկզբնաղբյուրները Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների

---

[2] Իշխանյան Ռ. «Հայկական Լեռնաշխարհի հնագույն պետությունների և բնակչության հարցը »

[3] Մ. Խորենացի «Հայոց պատմություն», էջ14

պատմություններն են: Դատելով փաստերից, հայերի ծագման մասին զրույցը ստեղծվել եւ արգոնավորդների ավանդությանն է միացվել Մակեդոնացու արշավանքների ժամանակաշրջանում, արգոնավորդների ավանդության մասին պատմող ավելի վաղ աղբյուրներում հայերի ծագման վերաբերյալ այդ տեղեկությունը չկա: Ամենայն հավանականությամբ, դա ունեցել է նույնպիսի քաղաքական միտում, ինչպիսիք են նաեւ պարսիկների եւ մարերի (մեդացիներ) հունական ծագման մասին զրույցները:

Հայերի արեւմտյան (այս անգամ՝ փռյուգիական) ծագման մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել հույն հեղինակներ Հերոդոտոսի (Ք.ա. 5-րդ դ.), Եվդոքսոսի (Ք.ա. 4-րդ դ.) եւ այլոց երկերում: Դրանցում բերված փաստարկները վերաբերում են փռյուգիացի եւ հայ զինվորների միատեսակ հագնված լինելուն եւ հայերենում փռյուգերեն շատ բառերի առկայությանը: Դրանցով, հասկանալիորեն, չի կարող բացատրվել մի ազգի՝ մյուսից ծագած լինելը. փռյուգիացիներն ու հայերն ազգակից են (ունեն ընդհանուր՝ արիական-հնդեվրոպական ծագում եւ արիական շատ ազգեր ունեն նման բառեր ու ավանդույթներ), եւ նրանց լեզուներում նույն (կամ նույնարմատ) բառերի առկայությունը, առավել եւս, զինվորների նման հագուստ կրելը պետք է օրինաչափ համարել:

Վրացական ավանդությունը ստեղծվել է հայկականի ազդեցությամբ եւ գրի է առնվել 9-11-րդ դարերի վրաց հեղինակների կողմից (Անանուն պատմիչ (9-րդ դ.), Լեոնտի Մռովելի (11-րդ դ.) եւ այլք): Ըստ վրացական ավանդության, Թարգամոսի (Թորգոմի) ութ որդիներից առաջացան մի շարք ժողովուրդներ. ավագ որդի Հայոսից՝ հայերը, Քաթլոսից՝ վրացիները, մյուս որդիներից՝ կովկասյան մի շարք ժողովուրդներ: Դատելով հատուկ անունների վերջավորություններից՝ այս ավանդությունն ունեցել է հունական ինչ-որ սկզբնաղբյուր եւս, որը մեզ չի հասել: Այն որոշակիորեն կրում է կնիքն իր ստեղծման ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակի, երբ հայոց Բագրատունի արքաների ազդեցությունը տարածված էր այսրկովկասյան երկրների վրա (դրանով էլ պետք է բացատրել ոչ թե Քարթլոսի, այլ Հայոսի՝ ութ եղբայրներից ավագագույնը լինելու հանգամանքը):

Արաբական ավանդությունը եւս հայերի ծագումը կապում է ջրհեղեղից հետո ազգերի՝ Նոյի որդիներից առաջացման պատկերացման հետ: Առավել հանգամանորեն այն շարադրված է 12-13-րդ դարերի արաբ մատենագիրներ Յակուտիի եւ Դիմաշկիի երկերում: Ըստ այդ ավանդության, Նոյի որդի Յաֆիսից (Հաբեթ) ծնվեց Ավմարը, ապա նրա թոռ Լանթան (Թորգոմ), որի որդին էր Արմինին (հայերի նախնին), որի եղբոր որդիներից սերում են աղվաններն ու վրացիները: Այս ավանդությունը ազգակից է համարում հայերին, հույներին, սլավոններին, ֆրանկներին և իրանական ցեղերին. հետաքրքիր է, որ այն պահպանել է ազգակից հնդեվրոպական ժողովուրդների միասնության շրջանից եկող հիշողությունը, ինչի սկզբնաղբյուրը մեզ մնում է անհայտ:

Հին եբրայական ավանդությունը գրի է առնվել Հովսեպոս Փլավիոսի (Ք.ա. I – Ք.հ. I դդ.) «Հրեական հնախոսության» էջերում: Հաղորդման համաձայն՝ «Ուրոսը հաստատեց Հայաստանը»: Հայագիտության մեջ այդ տեղեկության սկզբնաղբյուրի եւ մեկնաբանության վերաբերյալ չկա միասնական տեսակետ: Կա կարծիք, որ այստեղ խոսքը Արամ նահապետի որդի Արա Գեղեցիկի մասին է, քանի որ հրեական ավանդության մեջ Ուրոսը (Ուլոսը) համարվում էր Հին Կտակարանի Արամ նահապետի որդին: Ըստ մեկ այլ տեսակետի, Ուրոսը կարող է լինել Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվող արքա «Ռուսա Էրիմենայի որդին», ասորեստանյան սեպագիր աղբյուրներում «Ռուսա» անունը հիշատակվում է նաեւ «Ուրսա» տարբերակով, իսկ «Էրիմենա» անունը կարող է մեկնաբանվել եւ' որպես անձնանուն, եւ' որպես ցեղանուն:[4]

5-րդ դարից սկսած մինչեւ 19-րդ դարի կեսերը հայերի ծագման հարցում անառարկելիորեն ընդունվում էր հայկական ավանդությունը՝ ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» , որը դարեր շարունակ եղել է մեր ազգի համար ծագումնաբանության վկայագիր եւ դասագիրք: 19-րդ դարում պատմագիտությունում ի հայտ եկած նորույթները, սակայն, կասկած առաջացրին Պատմահոր տվյալների

[4] Իշխանյան Ռ. «Հայկական Լեռնաշխարհի հնագույն պետությունների և բնակչության հարցը »,էջ 8

արժանահավատության նկատմամբ, եւ հարցականի տակ դրվեց հայոց ծագումնաբանության վերաբերյալ ազգային ավանդության հաղորդումների ճշմարտացիությունը: 1837թ.-ից ծնունդ առավ համեմատական լեզվաբանությունը, ըստ որի՝ հայերն ունեն հնդեվրոպական ծագում, մի շարք այլ արդի ժողովուրդների հետ նախապատմական ժամանակներում կազմել են մեկ էթնիկ ընդհանրություն (հնդեվրոպական մայր ժողովուրդ») եւ զբաղեցրել միեւնույն տարածաշրջանը, որը գիտության մեջ պայմանականորեն կոչվում է «հնդեվրոպական նախահայրենիք»:[5]

Հայեիրս ծագումնաբանության մասին նոր ուսումնասիրությունների առիթ հանդիսացավ սեպագիր եւ հիերոգլիֆ արձանագրությունների վերծանումը 19-րդ դարում: Վերծանության արդյունքները հայտնի դարձրեցին Հայկական լեռնաշխարհում Ք.ա. 2-1-ին հազարամյակներում գոյատեւած մի շարք պետական կազմավորումներ, որոնք չէին համապատասխանում հայկական ազգային ավանդությանը, եւ կասկածներ ծնվեցին վերջինիս հավաստիության նկատմամբ: Դա իր հետ բերեց նոր տեսակետներ, որոնցից է գերմանացի գիտնական Հ. Ենսենի տեսակետը «հայ» անվան ծագման վերաբերյալ: Ըստ այդմ, «հայ» ցեղանունը առաջացել է խեթերի «հաթի» ցեղանունից, եւ հայերը խեթերի ժառանգներն են: Այս տեսակետը հետագայում մասամբ պաշտպանեցին մի շարք գիտնականներ, սակայն ի վերջո քննադատության չդիմացավ, հատկապես այն բանից հետո, երբ ցույց տրվեց, որ Ք.ա. 2-րդ հազարամյակում հայերն ու խեթերը բնակվել են կողք կողքի, ազգակից (հնդեվրոպական ծագում ունեցող) ժողովուրդներ են, սակայն չեն նույնանում: 19-րդ դարում համեմատական լեզվաբանության մեջ լայն տարածում ստացավ արիական-հնդեվրոպական նախահայրենիքի՝ հարավ-արեւելյան Եվրոպայում տեղադրության տեսակետը: Դա մի կողմից, մյուս կողմից հույն հեղինակների հաղորդումները հայերի՝ բալկանյան ծագման վերաբերյալ առաջ բերեցին հայերի եկվոր լինելու մասին տեսությունը, որն ամրապնդվեց Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ, Ք.ա. 9-6-րդ դարեր) սեպագիր արձանագրությունների ոչ

[5] Պետրոսյան Ա. «Հնդեվրոպական նախահայրենիքի խնդիրը եվ վաղնջահայերենը», էջ 3

հայերեն ընթերցման հետեւանքով: Ձեւավորվեց մի տեսակետ, ըստ որի հայերը, գաղթելով Բալկանյան թերակղզուց, Ք.ա. 8-6-րդ դարերում մուտք են գործել Ուրարտու, նվաճել այն եւ վերջինիս անկումից հետո Ք.ա. 6-րդ դարում ստեղծել իրենց պետությունը (Երվանդունյաց թագավորությունը): Այս տեսակետը, որ չի հիմնվում փաստերի ամբողջության վրա, ուստի եւ չի կարող ճշմարտացի լինել մի շարք պատճառներով, դարձավ եւ մինչ օրս մնում է քաղաքական շահարկումների առարկա (հատկապես պատմության թուրք կեղծարարների կողմից): Մինչեւ 20-րդ դարի 30-ականները, ԽՍՀՄ-ը փորձում էր բարեկամական հարաբերություններ պահպանել Թուրքիայի հետ, որի պատճառով գրքերում համարյա թե չէր նշվում այն փաստը, որ հայերը երբեւիցե ապրել են Թուրքիայի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող տարածքներում և սահմանափակում էին հայերի բնօրրանը ՀԽՍՀ–ի տարածքով: Այդ տարիներին լուրջ հետազոտություններ չեն անցկացվել: 1940-ականների վերջին և 1950-ականների սկզբին, որպես հայ ժողովրդի նախահայրենիք սկսվեց նշվել Հայասա պետությունը, որ նշվում էր խեթական սեպագրերում և որ գտնվում էր Խեթերի թագավորությունից արեւելք՝ այսինքն Հայկական լեռնաշխարհի արեւմուտքում: 1947 թ-ին Գրիգոր Ղափանցյանը հրատարակում է «Հայասան — հայ ժողովրդի բնօրրանը» աշխատությունը, որտեղ նա ապացուցում էր «Հայասան որպես հայերի նախահայրենիք» տեսակետն այն փաստով, որ հայերենն ունի երկու բնույթ. այն և՛ հնդեվրոպական է, և՛ փոքրասիական, ինչպես նաև Հայք և Հայասա բառերի նմանությամբ: 1950-ական թթ-ի սկզբներին Հակոբ Մանանդյանը, Բաբկեն Առաքելյանն ու Սուրեն Երեմյանը, հրատարակեցին աշխատություններ, որտեղ մերժվում էր գաղթային կամ միգրացիոն հիպոթեզը: Շատ գիտնականներ, այդ թվում Ադոնցը ընդունում էին այն տեսակետն, ըստ որի Հայասա անունը կազմված է հայ արմատից և խեթական ասա վերջածանցից: 1980-ականներից ի հայտ եկավ Հայկական հիպոթեզը, որի հեղինակներն էին ժամանակի ականավոր գիտնականներ ակադեմիկոս Թամազ Գամկրելիձեն և դոկտոր-պրոֆեսոր Վյաչեսլավ Իվանովը: Վերջիններիս

պնդմամբ հնդեվրոպական լեզվաընտանիքի նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով աշխատանքը կարող ենք փաստել,որ 1980-ական թվականների սկզբներին վերարծարծվեց դեռեւս դարասկզբին հայտնված տեսակետն այն մասին, որ արիական-հնդեվրոպական նախահայրենիքը Ք.ա. 5-4-րդ հազարամյակներում գտնվել է Առաջավոր Ասիայի հյուսիսում, ավելի որոշակի՝ Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արեւելյան շրջաններում, Հյուսիսային Միջագետքում եւ Իրանական սարահարթի հյուսիս-արեւմուտքում: Այս տեսակետը գնալով ավելի ամրապնդվում է նոր ի հայտ եկող փաստերով եւ այսօր ընդունվում է մասնագետների մեծ մասի կողմից: Հայ տեսակի ծագման հարցը այս տեսության ներքո ստացավ նոր պատկեր: Ինքնըստինքյան դուրս է գալիս հայերի եկվորության հարցը, քանի որ արիական-հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է հենց այն տարածքում, որում կազմավորվեց եւ իր պատմական ուղին անցավ հայ ազգը: Ներկայումս հստակորեն ու փաստացի կարելի է ասել, որ հայերը Ք.ա. 5-4-րդ հազարամյակներում կազմել են արիական-հնդեվրոպական մայր ժողովրդի մի մասը եւ 4-րդ հազարամյակի վերջին ու 3-րդի սկզբներին առանձնացել են արիական-հնդեվրոպական ընդհանրությունից: Այդ ժամանակաշրջանից սկսել է հայ ազգի կազմավորումը, որն ընթացել է երկու փուլով: Առաջինը, որ կարելի է բնութագրել որպես ցեղային միությունների եւ վաղ պետական կազմավորումների ժամանակաշրջան, տեղի է ունեցել Ք.ա. 3-2-րդ հազարամյակների ընթացքում: Երկրորդ փուլում, շնորհիվ միասնական պետականության ստեղծման, Ք.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսում ավարտվել է հայ ազգի կազմավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Իշխանյան Ռ. «Հայկական Լեռնաշխարհի հնագույն պետությունների և բնակչության հարցը », http://ysu.am/files/10R_Ishkhanyan.pdf
2. Մ. Խորենացի, «Հայոց պատմություն» https://drive.google.com/file/d/1eEDbUaM669NKRbyBGHQ9bt64VNbsqn9O/edit
3. Յակոբեան Ա., «Հայ էթնոսի կազմաւորման ժամանակը եւ պատմա-մշակութային առանձնայատկութիւնները»: https://digilib.aua.am/book/1590/1966/16457/%D5%80%D4%B1%D5%85%
4. Պետրոսյան Ա. «Հնդեվրոպական նախահայրենիքի խնդիրը և վաղնջահայերենը» https://artsakhlib.am/wp-content/uploads/2019/09/
5. Պարսամյան Վ. Ա. «Հայ ժողովրդի պատմություն» , ԵՊՀ 1961
6. Սամուէլեան Թ., «Հայոց ծագումը. հին ու նոր աղբյուրների և տեսությունների ակնարկ» http://ysu.am/files/4-1475054621-.pdf